Արմեն Եսայանց

Արվեստագիտության թեկնածու
Ցուցադրությունների գծով տնօրեն
Գաֆէսճեան արվեստի կենտրոն

Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «ՎԱՂԸ» ցուցադրությունը ներկայացնում է տասնյոթ հայ ժամանակակից արվեստագետի: Խըմբային նախագծերը ոչ միայն բազմաթիվ հեղինակների անդրադառնալու հնարավորություն են ընձեռում, այլև թույլ են տալիս առավել ընդգըրկուն բացահայտելու առանձին թեմաներ, ժանրեր կամ շերտեր: Գաֆէսճեան արվեստի կենտրոնն իրականացնում է արդեն 3-րդ նմանատիպ ցուցահանդեսը: Այդուհանդերձ, ի տարբերություն մինչ այդ կայացած «Վերաիմաստավորելով բնությունը» և «11. հայ ժամանակակից աբստրակտ արվեստի ընտրանի» ցուցադրությունների, «ՎԱՂԸ» նախագծի դիապազոնը շատ ավելի ընդարձակ է, քանի որ կենտրոնացած է ոչ թե մեկ թեմայի, այլ՝ Հայաստանի ներկայիս ակտուալ, ժամանակակից վիզուալ արվեստի ընդհանուր դաշտի վրա:

Ինչ է կատարվում այսօր Հայաստանում ժամանակակից կերպարվեստի հետ և ինչ ակնկալել վաղը: Որքանո՞վ է այն արձագանքում այսօր աշխարհում առկա արվեստի միտումներին՝ թեմաների, ոճերի, տեխնիկաների ու մեդիաների առումով: Այս և մի շարք այլ հարցերի, բնական է, դժվար է պատասխանել մեկ ցուցադրության միջոցով, սակայն հնարավոր է ներկայացնել այսօր երկրում գոյություն ունեցող վիզուալ արվեստի դաշտի որոշակի կետեր, որ առնչվում են այդ հարցադրումներին և որոնք հանրային լայն շրջանակների ուշադրությունից դուրս են:

«Արծիվ» և «Սասունցի Դավիթ» պարտեզի սրահներում ցուցադըրված տասնյոթ արվեստագետները մեծամասամբ երկչափ ստեղծագործությունների հեղինակներ են, որոնք աշխատում են հիմնականում ավանդական տեխնիկաներով և նյութերով, սակայն թեմաների և մոտեցումների առումով բավականին ակտուալ ու արդի են, իսկ երբեմն՝ նորարար: Հայաստանում պատմականորեն գեղանկարչությունը, պատկերային արվեստն ընդհանրապես, եղել է ամենակայացած և տարածված ուղղությունը, և այս ցուցահանդեսը լակմուսի թղթի նման նաև բացահայտում է, որ այսօր այդ ավանդույթը շարունակվում է: Այս փաստը խոսում է Հայաստանի ժամանակակից արվեստի դաշտի որոշակի բացերի մասին, ինչն ունի իր օբյեկտիվ պատճառները:

«ՎԱՂԸ» ցուցադրությանը ներկայացված արվեստագետներն անկախության սերնդից են: Սա պայմանավորված է ոչ այնքան մասնակից նկարիչներից մեծ մասի՝ անցած դարի 90-ականներին ծընված լինելու հանգամանքով, այլ այն պարզ տրամաբանությամբ, որ նրանք բոլորը գեղարվեստական կրթություն են ստացել, կայացել կամ կայանում են որպես արվեստագետ արդեն հետխորհրդային իրականությունում՝ Հայաստանի Հանրապետությունում: Այս առումով հետաքրքրական է հետևել՝ ինչպիսի ընդհանուր թեմաներ, արվեստային մոտեցումներ ու ոճեր են երբեմն տարանջատում կամ, ընդհակառակը, միավորում առաջին հայացքից միմյանցից բավականին հեռու գտնվող մի շարք ստեղծագործողների: Կիրառված տեխնիկաների ու նյութերի առումով էլ շրջանակը բավականին լայն է. կտավ-յուղաներկից մինչև տպագրական գրաֆիկա, լուսանկարչություն, կոլաժ, ասեղնագործություն, խճանակար ու ռեդի-մեյդ:

Երկու սրահներում առկա վաթսունից ավելի աշխատանքներում էլ կարելի է նկատել, որ անկախ տեխնիկայից, կենտրոնական թեմաների մեջ առանձնանում են կենցաղային-առօրեականի, ընտանեկան-անձնականի նարատիվը, դասական արվեստային կամ պատմամշակութային ժառանգության հետարդիական վերաիմաստավորումը, պոպ-արտի և կոնցեպտուալիզմի լոկալ մեկնաբանությունը, վերացական արվեստի ու դասական բնանկարի նոր դրսևորումները, արվեստագետի ինքնահայեցողությունը, նոր գեղագիտությունը թե՛ կտավի ու թղթի վրա, և թե՛ քանդակի մեջ:

Հետևելով իր առաքելությանը հայկական մշակույթի լավագույնը ներկայացնելու առումով՝ «ՎԱՂԸ» ցուցադրության միջոցով Կենտրոնը փորձում է ուրվագծել, թե ինչ ուղղությամբ է շարժվում հայ ակտուալ ժամանակակից կերպարվեստն այսօր, և ինչ կարելի է սպասել ապագայում: Այս ցուցահանդեսին ներկայացված արվեստագետները չեն բացահայտում Հայաստանի ժամանակակից արվեստի ամողջ դաշտը, բնական է. ըստ այդմ, ցուցադրությունը կարող էր նաև այլ բովանդակությամբ կայանալ: Գաֆէսճեան արվեստի կենտրոնում առաջին անգամ ներկայացված հեղինակները ստեղծում են մի հարթակ, որտեղ շարունակական անհատական և խմբային նախագծերի միջոցով առաջիկայում երևան կգան հայ ժամանակակից արվեստի տարբեր շերտեր՝ ինչպես այս, այնպես էլ այլ արվեստագետների հետ համագործակցելու շնորհիվ:



Միլենա Ադամյան
Milena Adamyan

Մերի Բադալյան
Mary Badalian

Գայանե Բարխուդարյան
Gayane Barkhudaryan





Նարեկ Բարսեղյան
Narek Barseghyan



Կիմա Գյարաքյան
Kima Gyarakyan

Անուշ Դավթյան
Anush Davtyan



Աննա Կրճացյան
Anna Krtshatsyan

Նարեկ Հակոբյան
Narek Hakobyan



Արմեն Հակոբջանյան
Armen Hakobjanyan

Մանվել Մաթևոսյան
Manvel Matevosyan